

Նորին Վեհափառութիւնը Երեւանի Փոխ-թեմակալ
Նշանակեց Գեր. Յուսիկ եպիսկոպոս Մովսիսեանին, որը
Նոյեմբերի 8-ին ճանապարհուեց Երեւան՝ իր պաշտօնա-
տեղին։

Նախկին Փոխ-թեմակալ Տ. Կարապետ վարդապետը
վերադառնալով Մայր Աթոռ, կարգուեց դասատու Գ.
Ճեմարանի։

Տ Ա Ճ Կ Ա Հ Ա Յ Ք

Բիւզանդիոնի մէջ կարգում ենք 15 սեպտեմբեր․

Ռուսոճուղի առաջնակարգ վաճառականներէն Սարգիս էֆ.
Գույումճեան, որ ծանօթ է կրթական և բարեգործական նպա-
տակներու համար ըրած ձեռնտուութիւններով, այս անգամ
մանկապարտէզի և նախապատրաստական վարժարանի յատուկ
շէնք մը շինել տուած է իր ծախքով, կրկնայարկ, 1,000 ոսկիով։
Այս շէնքին կառուցումն աւարտելու վրայ է և հոկտեմբերի
մէջ պիտի կատարուի բացման հանդէսը։ Ս. Պատրիարքն օրհ-
նութեան կոնդակ պիտի զրկէ յիշեալ կրթատէր ազգայինին։

16 Սեպտեմբեր․

Երուսաղէմի վանքին հաշուեքննիչ Մանասսեմըն երէկ Նիստ
գումարեց Ղալաթիոյ Խորհրդարանը․ ներկայ էին վսեմ․ Գրիգոր
էֆ. Խորեան, Ասլանեան, Սէթեան, Սուրէնեան էֆէնտիք։ Ղե-
ւոնդ վ. Մազսուտեան ևս ներկայ էր պահանջուած բացատրու-
թիւններ տալու համար։

17 Սեպտեմբեր․

Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսը վանքին վերաբերեալ կալուա-
ծական խնդրոց վրայ տեղեկութիւններ հաղորդած է Ս. Պատ-

ընթացք Հօր և զանազան դործոց կարգադրութեան համար Պատարիարքարանի աջակցութիւնը խնդրած է: Ա. Կաթողիկոսն այս օրերս կպատրաստուի Ատանա երթալու:

Երուսաղէմի պաշտօնանի լուսարարապետ Տ. Վահրամ վարդապետի ընտելամենէն Տ. Գրիգորիս վ. հեռագրաւ կիմացնէ Ս. Պատրիարք Հօր, թէ միաբանական ժողովը կպատրաստուի լուսարարապետի ընտրութիւն կատարել. ուռաի կխնդրէ, որ Պօլոսոյ Պատրիարքարանէն գլուխ այս ընտրութիւնն յետաձգելու համար: Ս. Պատրիարք Հայրը կարևորութենէ զուրկ դատելով անպատասխանի թողած է այս հեռագիրը՝ նկատելով, որ լուսարարապետի ընտրութիւնը միաբանական ներքին դործ մ'է լոկ, և Երուսաղէմի Ս. պատրիարքին կպատկանի այդ մասին որոշում տալ ե՛րբ և ի՛նչպէ՛ս որ ուզէ:

19 Սեպտեմբեր.

Եփրէնէի Առաջնորդական Տեղապահ Տ. Արսէն ա. քհնյ. Դերձակեան կտեղեկադրէ Պատրիարքարան թէ Տ. Դանիէլ ծ. վարդապետի նախագահութեամբ և Քաղ. Ժողովին և Ս. Թորոս եկեղեցւոյ Թաղ. Խորհուրդին անգամոց գործակցութեամբ յանձնաժողով մը կազմուելը է հրկիզեալներուն համար նպաստ հաւաքելու:

Այրած Արշակունեան վարժարանի երկսեռ ուսանողը կը յաճախեն Կայարանի Ա. Լուսաւորչեան և Ս. Կարապետ եկեղեցւոյ Թորքոմեան վարժարանները: Ըստ վերջին քննութեան, տեղւոյն աղգայիններուն վնասն է 300 տուն, 30 կտոր եկեղեցապատկան կալուած, որ ապահովագրած չէին: Այրած եկեղեցւոյն վնասն է 500 ոսկի. նաև աղգ. վարժարանը՝ 1,500, Առաջնորդարանը 800, քահանայից և պաշտօնէից սենեակները՝ 300, և աղգ. հաստատութեանց դոյրեր և կարասիներ՝ 100 ոսկի. Տ. Արսէն ա. քահանայ ի վերջոյ նպաստ կը խնդրէ Պատրիարքարանէն յառաջիկայ ձմեռն ատեն հրկիզելոց անմիջական պիտոյքներն հոգացուելու համար:

20 Սեպտեմբեր.

Ս. Պատրիարք Հայրն երէկ այցելեց Աղգ. Հիւանդանոց և աչքէ անցուց նոր շէնութիւնները: Յառաջիկայ հինգշաբթի

կրկերսկոն Գ. Թևի Յակոբեանի բաժնի աշխատութիւնք, որք ընդհատուած էին շինութեան մէկ մասը քակել պէտք ըլլալուն համար: Յակոբեաններու բաժնէն դէպ ի Կիւլպէնկեաններու բաժնին առաջնորդող անցքին շինութիւնն այսօր վաղը պիտի սկսի. Գ. Թևի Կիւլպէնկեաններու բաժնին անցք պիտի չունենայ, որով յարկ մը աւելի պիտի ունենայ միւսներէն: Քովի երկու բաժններն, որք այդ յարկը չունին, մէջտեղի անցքերը պիտի ունենան: Գ. Թևին առջև երկաթ գիծեր պիտի հատատուին, որք շէնքին շուրջը դառնալով, պիտի ուղղուին ներսերը: այս գիծերուն վրայ վաղոններ պիտի զետեղուին փոխադրութեանց գիւրութեան համար: Իսկ դեղարանին շինութեան պիտի ձեռնարկուի մօտերս, պատրաստուած և Խօրասանձեան ընտանիքին կողմէ ընդունուած յատակագծին համեմատ:

Կարինէ կգրեն մեզ սեպտ, 10 քուպլ.—«Գալֆայեան եղբայրներու կողմէ՝ շէնքի մը իւր վարժարան գործածուելու համար ազգին նուիրուիլն արդէն ծանուցուած էր: Անցեալ կիրակի ալ (4 սեպտ.) սոյն վարժարանի բացման հանդէսը կատարուեցաւ Տ. Զաւէն ս. հօր նախագահութեան ներքև: Ներկայ էին Գաւառ. ժողովոյ Դիւանք, Կրօնական և Քաղաքական ժողովները, Ուսումնական և Տնտեսական Խորհուրդները, Ազգ. վարժարաններու ուսուցչական երկսեռ մարմինը, ինչպէս և Սանասարեան վարժարանի Տեսչութիւնն և ուսուցիչներէն մէկ քանին, նաև ժողովրդեան բազմութիւն մը:

Սղերդէն թղթակցութիւն մը հրատարակեցինք անցեալները, որ կ'պարզէր ընտանեկան դժբախտութիւններ, որոնց պատճառ կ'ըլլան անչափահաս ամուսնութիւններ: Տեղական սոյն յոռի սովորութիւն նախ արգելք կ'ըլլայ, որ հիմնական դաստիարակութենէ զուրկ մ'նան աղջիկները, քանի որ հազիւ մէկ երկու տարի նախալրժարան կ'յաճախեն, ահա ծնողքներն ամուսնութեան թեկնածու կը հանդիսացնեն զիրենք: Այսպէս, թերի կրթութիւն մը ոտացած, հրաժեշտ կուտան վարժարանին, անդիտակից ու անպատրաստ իրենց մայրական դերին: Այս սովորութիւնը տգէտ մայրեր յառաջ կ'ընեն, հետեւաբար աղոց դաստիարակութեան մէջ մայրական բաժինը գոյութիւն չունենար, ինչ որ դաւաճի մը նկարագրին կազմութեան համար մեծ թերի մ'է: Նոյնպէս գորգաշինութեան և այլ ճարտարարուեստի մէջ

աղջիկները, հազիւ իրենց ընդունակութիւնը ցոյց կուտան և յաջող փորձեր կ'կատարեն, այնպէս որ մէկ քանի տարուան տընութիւն մը վարպետներ պիտի հանդիսացնէր զիրենք, ծնողքները կհեռացնեն զանոնք գործատեղանէն և կուտիպեն որ ամուսնական լուծը կրեն, հազիւ 8—10 տարեկան հասակի մէջ:

Սղերդի Առաջնորդական տեղապահ Տ. Կորիւն վարդ. Պատրիարքարան ուղղած գրով մը, կըացատրէ անչափահաս ամուսնութեանց ցաւալի արգիւնքներն և կարգադրութիւն մը կ'ընդրէ վերջ տալու համար այս յոռի սովորութեան: Կրօն. ժողովը պատասխանեց՝ թէ առ այդ միջոցներ չունի. պէտք է որ առաջնորդները կամ տեղապահները մաքառեն այս չարիքին դէմ:

21 Սեպտեմբեր.

Ս. Պատրիարք Հայրը հրէից տարեմուտին առթիւ շնորհաւորական գիր մը ուղղած էր հրէից բարունապետի տեղակալ Մոշէ Լէյլի էֆ.ի, որ յատուկ գրութեամբ մը շնորհակալութիւն յայտնած է:

Արևելեան լեզուներու մասնադէտ Տանիմարքացի Մր. Վէնէտիկսըն, որ լեզուաբանական ուսումնասիրութեանց համար ուղևորութիւններ կ'կատարէ, վերջերս Աղթամար կղզին ալ այցելել է և քննելով վանքին մէջ գտնուող չորս աշակերտներու ուսումնական լիճակը, դո՛հ մնացեր ու խոստացեր է 150 ֆր.ի գրենական պիտոյք, երկրագունտ մը և զանազան առարկաներ զրկել:

Այնթապի Գաւառ. ժողովն օգոստոսի 26 ին նիստ գումարելով, Քաղաքական ժողովոյ ընտրութիւնը կատարել է հետեւեալ կերպով. Տեարք Յակոբ Գարամանուկեան, Գէորգ Լէյլէկեան, Կարապետ Թէրզիպաշեան, Յովսէփ Առաքելեան, Գալուստ Ղազարեան, Գրիգոր Քիւթիւկեան և Կարապետ ձէպէճեան: Իսկ Տնտեսական Խորհուրդ ընտրել է հետեւեալ անգամներէն. Տեարք Նազար Նազարեան, Գրիգոր Լէյլէկեան, Արմենակ Պաղտասարեան, Կարապետ Նազարեան, Յովսէփ Աշճեան, Յովսէփ Սահակեան և Արտաշէս Թահթաճեան:

